



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 47Լ

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏԱԾ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԱՆ
ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նկատի ունենալով դատավորների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործման նպատակով կազմակերպվող պարտադիր ուսումնական գործընթացը և ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել 2018 թվականի ընթացքում վերապատրաստման ենթակա դատավորների ցուցակը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել 2018 թվականի ընթացքում վերապատրաստման ենթակա Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ցուցակը՝ համաձայն հավելված 2-ի:

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

2017թ. դեկտեմբերի 20
ք. Երևան

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ